

Ս Է Թ Է Ն = Ե Ր Կ Ա Ն Ա Ք Ա Ր

Ջրաղացի չափ կարեւոր ու համայնքի պէտքին ծառայող հաստատութիւն մըն էր Սէքէնը ուր կը ծեծուէր ցորենը:

Սէքէնի պարտականութիւնն էր պարկերով տանիլ ու վերադարձնել ապրանքը իր տիրոջ:

Բոլորակաձեւ ու տափարակ բարձրութեան մը վրայ հաստատուած էր սիւն մը, որու շուրջը կը դառնար ջաղացքի հսկայ քար մը ուղղաձիգ դիրքի վրայ:

Այդ քարին լծուած ձի մը, աչքերը կապուած՝ կը դառնար անդադար, շարժման մէջ դնելով քարը իր ծիրին մէջ: Սէթէնի պաշտօնեան երբեմն ջուր կը սրսկէր ու ձեռքի թիակով տակնուվրայ կ'ընէր ցորենը:

Այսպէսով Սէթէնի վարժ ձեռքերուն տակ թեփը կ'անջատուէր պուլղուրցու ցորենէն:

ԿՈՐԿՈՏ = ԿԱՆՏՈՄԱ = ԾԵՄԱԾ = ԵԱՐՄԱ

Հերիսայի (Քէչկէկ), թանապուրի ու բազմաթիւ կերակուրներու համար անհրաժեշտութիւն մըն էր ծեծուած ցորենը:

Որոշ տեսակի ցորեն կը դնուէր, կը լուացուէր ու կը տարուէր Սէթէն:

Հոն կեղեւը կը ճեղքուէր քարի ծանրութեան տակ, առանց ճրգուելու կամ կոտորելու:

Սերմէն անջատուած ու թեփը հանուած ցորենը դիւրաւ կ'եփէր, կակուղ էր ու դիւրամարս:

Ս Ա Ն Դ = Տ Ի Պ Է Կ

Թաղերու մէջ, բարեսէր անձերու կողմէ հաստատուած կ'ըլլար համայնական սանդը:

Մէկ կտոր, բարձր ապառաժի մը մէջ փորուած կ'ըլլար փոսը եւ անոր խորութեան համեմատ ալ շինուած անոր ծեծիչը: Այս վերջինը՝ մաշած ու ողորկցած գերանի կտոր մըն էր, կարճ կոթով ու ճակատէն միւս ձեռքով բռնելիք յարմարութիւնով:

Սանդին մէջ կը ծեծուէր Մեծ Պահքի մեծաքանակ սիսեռն ու ասպուրը, ինչպէս նաեւ աշնան ապուխտի սխտորը:

Գործածողը պարտաւոր էր լուալ ու մաքրել սանդն ու ծեծիչը, մեկնելէ առաջ:

Այդ նպատակով կալիսաններով ջուր բերած կ'ըլլային հետերնին: